ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գոյականական անդամի լրացումների ուսուցումը

Ուսուցչուհի՝ Էլմիրա Հովհաննիսյան

/«Գյումրու թիվ 30 դպրոց» ՊՈԱԿ/

Գյումրի2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ Ա ՈՐՈՇՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ----------5

ԳԼՈՒԽ Բ ՀԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ----------11

ԳԼՈՒԽ Գ ԲԱՑԱՀԱՅՏՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ----------14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Այսօր առավել , քան երբևէ կարևորվում է մայրենի լեզվի անաղարտության հարցը: Հասարակական կյանքում, մամուլում, հեռուստատեսության լեզվում մենք առնչվում ենք լեզվական բազում սխալների, որոնք վերաբերում են բառագործածությանը , նախադասության անդամների շարադասությանը, համաձայնությանն ու խնդրառությանը, խոսքի տրամաբանական ոչ ճիշտ կառուցվածքին, լեզվական այլ իրողությունների: Այս ամենը վտանգում է մաքուր, գեղեցիկ հայերենի պահպանումը, որը յուրաքանչյուրիս սրբազան պարտքն է:

Սխալներից զերծ մնալու անհրաժեշտ նախապայման է ոչ միայն լեզվական կանոնների իմացությունը, այլև դրանք խոսքում կիրառելու կարողունակությունը: Այս նկատառումով էլ արդիական նշանակություն է ստանում գոյականական անդամի լրացումների ուսուցումը, որի արդյունքում սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեությամբ ձեռք բերած լեզվաքերականական գիտելիքները կզուգակցի լեզվագործածական ունակությունների հետ ու կկարողանա լիարժեք ու ճիշտ հաղորդակցվել:

Ուսումնասիրության նպատակը

Զարգացնել սովորողների սեփական մտքերը խոսքով ճիշտ արտահայտելու, լեզվական կանոնները գործնականում կիրառելու ունակություններ, բանավոր ու գրավոր գրագետ խոսքով ազատ հաղորդակցվելու կարողություններ:

Ուսումնասիրության խնդիրները

- Ամրապնդել աշակերտների գիտելիքները գոյականական անդամի լրացումների վերաբերյալ
- Զարգացնել խոսքում որոշչի, հատկացուցչի և բացահայտչի տարբերակման ու առանձնացման հմտություններ
- Վերացնել աշակերտների բանավոր խոսքում հաճախ հնչող սխալները
- Զարգացնել ճիշտ կետադրելու հմտություններ

- Հարստացնել սովորողների բառապաշարը, ձևավորել համագործակցելու և ազատ հաղորդակցվելու ունակություններ

Հետազոտություն իրականացնելու մեթոդները

Կիրառվել են համեմատական, համադրական, վերլուծական մեթոդներ՝ բերված փաստերը հիմնավորելու և ճշգրիտ եզրահանգումներ կատարելու նպատակով:

Ուսումնասիրության կառուցվածքը

Սույն աշխատանքը կազմված է կառուցվածքային 5 բաղադրիչներից, որոնց կցված է օգտագործված գրականության ցանկը:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի ընտրությունը,արդիականությունը, ուղենշված են նպատակը, հետազոտություն իրականացնելու մեթոդները:

Առաջին գլխում ներկայացված է որոշչի ուսուցումը (արտահայտությունը, շարադասությունը, կետադրությունը,մակդիրային կիրառությունը, ուսուցման մեթոդները):

Երկրորդ գլխում ներկայացված է հատկացուցչի ուսուցումը (արտահայ-տությունը,հատկացուցչի և հատկացյալի կապակցումը, շարադասությունը, կետադրությունը, ուսուցման մեթոդները):

Երրորդ գլխում ներկայացված է բացահայտչի ուսուցումը (տեսակները, բա-ցահայտչի և բացահայտյալի կապակցումը, կետադրությունը, ուսուցման մեթոդները):

Եզրակացության մեջ ներկայացված են այն վերջնարդյունքները, որոնց միտված է սույն աշխատանքը :

ԳԼՈՒԽ Ա

ՈՐՈՇՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Թեմայի ուսուցման համար կարևոր նախապայման է **գոյականական անդամ** հասկացության ըմբռնումը: Պիտի ընդգծել, որ գոյականական են կոչվում բոլոր այն անդամները, որոնք նախադասության մեջ արտահայտվում են գոյականով կամ գոյականաբար գործածված այլ խոսքիմասային պատկանելություն ունեցող բառերով: Նրանք կարող են ունենալ այնպիսի լրացումներ, որոնք ցույց են տալիս որպիսություն, պատկանելություն, սերում, վերաբերություն կամ էլ լրացյալի ով կամ ինչ լինելը: Այդ լրացումներն են որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը: Նախադասության այս անդամների ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, թե աշակերտն ինչ չափով է յուրացրել խոսքի մասերի, հատկապես գոյականի վերաբերյալ գիտելիքները:

Հաշվի առնելով, որ աշակերտները տարրական դպրոցում ընդհանուր տեղեկություններ ունեն գոյականական անդամի լրացումների մասին, յուրաքանչյուր լրացման ուսուցում կարելի է սկսել ԳՈՒՍ-ի մեթոդով:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Աշակերտը գիտի, որ որոշիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս առարկայի որակ, որպիսություն, քանակ, չափ: Պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, քանի՞երորդ, ո՞րերորդ հարցերին: Որոշիչ ունեցող անդամը կոչվում է որոշյալ:

Հանձնարարվում է այս ամենը ներկայացնել պրիզմայի(բազմանիստի) միջոցով:



լրացում

Որոշչի արտահայտությունը

Ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել խմբային հետազոտության մեթոդով՝ հանձնարարելով քարտային աշխատանք,որի արդյունքում սովորողն ըմբռնում է,որ որոշիչը կարող է արտահայտվել՝

1. ածականով.

Ես իմ **անուշ** Հայաստանի **արևահամ** բառն եմ սիրում...[5, էջ 289]

Ուշադրություն պիտի դարձնել այն դեպքերին,երբ մեկ որոշյալը կարող է ունենալ մեկից ավելի որոշիչներ: Դրանք բազմակի անդամներ են, տրոհվում են ստորակետով և կոչվում են համասեռ որոշիչներ: Սակայն եթե որոշիչներից մեկը որակական ածական է, իսկ մյուսը՝ հարաբերական, ապա նրանք չեն տրոհվում, բազմակի չեն կոչվում, քանի որ նույն առարկան ներկայացնում են տարբեր առումներով: Սրանք տարասեռ որոշիչներ են, ընդ որում հարաբերական ածականը միշտ նախորդում է որակականին:

Աշակերտները երկսյուն աղյուսակով ներկայացնում են համասեռ ու տարասեռ որոշիչներով բառակապակցություններ:

Համասեռ որոշիչներով բառակապակց.	Տարասեռ որոշիչներով բառակապակց.
երփներանգ, բուրավետ ծաղիկներ ականակիտ, զուլալ աղբյուր նուրբ, չքնաղ էակ	պողպատյա ծանր վահան փայտե դեղին նստարան ամառային թեթև հագուստ

2. թվականով .

Քեզ երբեք սիրտս չի մոռանա,

Իմ մաքուր, **առաջին** իմ անուրջ... [8, էջ 97]

Աշակերտների ուշադրությունը պետք է կենտրոնացնել այն հանգամանքին, որ երբ որոշիչն արտահայտվում է մեկից բարձր բացարձակ թվականով, որոշյալը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով: Նույնը վերաբերում է նաև **մի քանի**, **մի երկու** դերանուններին. երկու տղա, երկու տղաներ, մի քանի գիրք, մի երկու գրքեր:

Որոշիչը կարող է միաժամանակ արտահայտվել դասական ու քանակական թվականներով։Այս դեպքում նախ դրվում է դասական,ապա քանակական թվականը։

Սկզբում մոտենան առաջին երկու,ապա՝ երկրորդ երեք խմբերը։

Բառապաշարի հարստացման նպատակով կարելի է հանձնարարել երկյուն աղյուսակով ներկայացնել քանակական և դասական թվականներով արտահայտված որոշիչ - որոշյալ կապակցություններ, որոնք ունեն դարձվածքային արժեք։

Քանակական թվականով դարձվածքներ	Դասական թվականով դարձվածքներ
չորս պատ- բնակարան առանց կահավորության երկու խոսքով - կարճ, համառոտ հարյուր տոկոսով- ամբողջությամբ հազար բերան- բազմիցս մեկ ձայնի-միալար, շարունակ	առաջին ծիծեռնակ- նախակարապետ առաջին ջութակ- հիմնական դեմք երկրորդ երիտասարդություն-եռանդի վերելք յոթերորդ երկինք-երանության, վայելքների աշխարհ

3. դերանվան տարբեր տեսակներով.

ա. ցուցական

Ես կախարդված եմ միշտ **նույն** երազով,

Միշտ **նույն** ցնորքն է իմ սիրտը այրում: [8, էջ 30]

բ. որոշյալ

Տարիներ, տարիներ կսահեն,

Կմեռնեն երազները **բոլոր**... [8, էջ 97]

գ.անորոշ

Հեռու երկրի լուսե հովտում

Օրերն **ուրիշ** երգ են հյուսում: [8, էջ 99]

դ. հարցական

Քանի՜ սերեր, **քանի՜** հուրեր զուր հանգցրի- հազա՜ր ափսոս... [8, էջ 401]

դ. ժխտական

Իմ ճամփան անվախճան մի գիշեր,

Ինձ շոյող **ոչ մի** շող չի ժպտա... [8, էջ 65]

4. անորոշ, հարակատար, ենթակայական դերբայներով.

Ապրելու ապրիլ, ինչո՞ւ է մեռնում

Գարնան սպասող մի ողջ ժողովուրդ... [4,էջ 96]

Իմ **լքված** սրտի կարոտը անծայր

Ամեն ինչի մեջ որոնում է քեզ... [8, էջ 30]

Հոգիդ կախարդեմ ու հմայեմ քեզ,

Ինձ **այրող** հուրը նետեմ քո սրտին... [8, էջ 96]

Աշակերտը կարող է շփոթել նախադասության մեջ անորոշ դերբայի սեռական հոլովաձևն ու ապակատար ձևաբայը:

անորոշ	ապակատար
խմելու ջուր գրելու թուղթ ապրելու տարիներ	խմելու է ջուրը գրելու է նամակը ապրելու է քաղաքում

Ապակատար ձևաբայը չի կարող ձևավորել որոշիչ լրացում. այն կազմում է միայն պարզ ստորոգյալ:

5. գոյականի տարբեր հոլովաձևերով.

ուղղական - Նա **քար** անտարբերությամբ ընդունեց լուրը:

սեռական - **Սուրճի** գավաթները շրխկացնելով՝ ներս մտավ մատուցողը:

բացառական- Վերցնելով **կաշվից** պայուսակը՝ արագ դուրս եկավ սենյակից:

գործիական- Երկար **մորուքով** ծերունին խորաթափանց հայացքով նայեց հյուրին:

6. մակբայով.

Արագ վազքից մարզիկը շնչակտուր էր եղել:

Ձիու **դանդաղ** ընթացքը զայրացնում էր հեծյալին:

7. բառակապակցությամբ.

Մահու պես դաժան ձմեռն է իջել,

Մարել են, մեռել երգ, ծաղիկ ու բույր: [8, էջ 96]

8. դերբայական դարձվածով....

Ես կգամ որպես մոռացված մի երգ՝

Հյուսված աղոթքից,սիրուց ու ծաղկից:[8, էջ 103]

Առանձին դասաժամ պիտի հատկացնել որոշչի շարադասությանը, կետադրությանը և մակդիրային գործածությանը:

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար նախադաս է, սակայն շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս: Այս դեպքում այն ավելի է շեշտվում, և խոսքը դառնում է ավելի հուզական ու զգացմունքային:

«Շարադասության այն փոփոխությունները, որ կատարվում են խոսքի պատկերավորության, արտահայտչական նպատակով, կոչվում են շրջուն շարադասություն կամ շրջադասություն (ինվերսիա)» : [3, էջ 108]

Սիրում եմ մեր երկինքը **մուգ**,ջրերը **ջինջ**,լիճը **լուսե**... [5, էջ289]

Որոշչի շարադասությամբ է պայմանավորված նրա կետադրությունը:

Եթե հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա որոշյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով:

Բարդիների կատարները՝ **բարձր, օրորուն**, տարուբերվում էին մեղմ քամուց:

Նա մի չքնաղ աղջիկ էր՝ **կլորիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով:**

Տրոհվում է նաև հետադաս որոշիչ դերբայական դարձվածը:

Մարգագետինը՝ **պճնված բազմաթույր ծաղիկներով**, արբեցնում էր զգլխիչ անուշահոտությամբ:

Կետադրական հմտություններ զարգացնելու նպատակով կարելի է հանձնարարել տեքստում ընդգծված գոյականական անդամները լրացնել հետադաս բազմակի կամ ծավալուն որոշիչներով և կետադրել, նախադաս որոշիչները դարձնել հետադաս, կետադրել համր բնագրեր:

Որոշիչները կարող են հանդես գալ մակդիրային կիրառությամբ:

«Մակդիրն առարկայի, երևույթի, որևէ անձնավորության գեղարվեստական բնութագիրն է, որն ընդգծում է նրա որևէ հատկանիշը, վերաստեղծում նկարագրվող իրողության տեսանելի պատկերը, միաժամանակ արտահայտում նաև խոսողի վերաբերմունքն ու գնահատականը»: [3, էջ 67]

Ինձ թաղե՛ք, երբ **կարմիր վերջալույսն** է մարում,

Երբ **տխուր զգվանքով արեգակը մեռնող**

Սարերի **արծաթե կատարներն** է վառում,

Երբ մթնում կորչում են ծով ու հուշ... [8, էջ 39]

Աշակերտների ստեղծագործական կարողությունների և պատկերավոր մտածողության զարգացման նպատակով կարելի է հանձնարարել գրել տասը բոպեանոց շարադրանք՝ գործածելով մակդիրային կապակցություններ:

Թեմայի ավարտին աշակերտները լրացնում են ԳՈՒՍ աղյուսակի վերջին սյունակը:

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՏԿԱՑՈՒՑՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Հատկացուցիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս լրացյալի պատկանելությունը,վերաբերումը, սերումը, ծագումը: Պատասխանում է ու՞մ, ինչի՞, ինչերի՞ հարցերին: Դրվում է սեռական հոլովով: Լրացյալը կոչվում է հատկացյալ: Հատկացուցիչը և հատկացյալը կապակցվում են խնդրառությամբ:

Կազմում ենք բազմանիստ:



Եռասյուն աղյուսակով ներկայացնում ենք ստացականության հարաբերությունը:

Պատկանելություն	Վերաբերում	Սերում և ծագում
հողի ուժը արևի ջերմությունը	խաղի կանոնները բնակության հարցը	արքայի դուստրը քամու շունչը

Հատկացուցչի արտահայտությունը

Հատկացուցիչը կարող է արտահայտվել՝

1. Գոյականով.

Սարերի գլխին ձյուն տեսա,

Աչքերս խրտնեցին: [7, էջ 199]

Սեռական հոլովով դրված որոշչի և հատկացուցչի շփոթը կանխելու համար երկսյուն աղյուսակով ներկայացնում ենք գոյական որոշչի և հատկացուցչի օրինակներ:

Որոշիչ- որոշյալ (ինչպիսի՞)	Հատկացուցիչ- հատկացյալ (ինչի՞)
սուրճի գավաթ սարի ծաղիկ հացի դանակ	սուրճի հատիկներ սարի լանջ հացի բույր

2.Անձ կամ առարկա ցույց տվող դերանուններով.

Հայաստան ասելիս աշխարհը **իմ** տունն է,

Հայաստան ասելիս էլ մահը **ու՞մ** շունն է... [7, էջ 333]]

3.**Անորոշ դերբայի սեռական հոլովաձևով.**

Այդ մասին **հիշեցնելու** կարիք չկա:

Արագ **գործելու** ժամանակը քիչ էր:

Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:

4. Գոյականաբար գործածված այլ բառերով.

Հեքիաթներն ավարտվում են **բարու** հաղթանակով:

Մեկի խոսքը **մյուսի** շարունակությունն էր:

Ինը **երեքի** բազմապատիկն է:

Հատկացուցչի շարադասությունը

Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար նախադաս է, բայց կարող է հանդես գալ նաև շրջուն շարադասությամբ և լինել հետադաս: Այս դեպքում այն ավելի է ընդգծվում, և խոսքը դառնում է ավելի զգացմունքային:

Ես՝ երգիչ **հրի, սրի**, շահ չունեմ քո սիրուց զատ: [7, էջ 198]

Մանուշակագույն երկինք են թվում

Դաշտերում ծաղկած արտերն արտույտի։[7,էջ355]

Հատկացուցչի կետադրությունը

Երբեմն հատկացուցչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ։Այդպիսի հատկացուցիչը կոչվում է հեռացած։ Իմաստային շփոթը կանխելու համար այն տրոհվում է բութով։

Աշակերտի՝ Շիրակի մարզի մասին **տեղեկությունները** կցկտուր էին։

Սամվելի՝ տվայտանքներից ալեկոծ **սիրտը** սևակնած էր գիշերվա նման։

Նույն նպատակով բութ է դրվում, եթե հատկացուցչի և հատկացյալի միջև ընկնում է որոշիչ դերբայական դարձված։

Հյուրի՝ վշտից պղտորված **աչքերում** տագնապ կար։

Հատկացուցիչը չպետք է շփոթել կողմնակի ենթակայի հետ. վերջինս հանդես է գալիս դերբայական դարձվածի կազմում։

Աղջկա՝ տանից հեռանալու ժամանակ բոլորն արտասվեցին։

Նյութի ամրապնդման ու ամփոփման համար աշակերտներին հանձնարարվում է Վենի դիագրամով ցույց տալ որոշչի և հատկացուցչի առանձնահատկություններն ու ընդհանրությունները։ Ուշադրություն է դարձվում, որ հատկացուցիչը արտահայտում է երկու առարկաների հարաբերություն, իսկ որոշիչը՝ առարկայի և հատկանիշի։ Ընդհանրություններից պիտի շեշտել հատկապես նրանց՝ գոյականական անդամի լրացում լինելը։

Առանձնահատկություն

Առանձնահատկություն



Ընդհանրություն

ԳԼՈՒԽ Գ

ԲԱՑԱՀԱՅՏՉԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Թեմայի ուսուցումը սկսում ենք **բացահայտել** բառի բացատրությամբ:

Բացահայտել - 1. Արտահայտել, հրապարակել: 2. Բացատրել, պարզաբանել, մեկնել: 3. Ի հայտ բերել, բաց անել, երևան հանել, հայտնաբերել: 4. Բացել, խոստովանել [1, էջ 182]:

Նախադասության՝ առարկա ցույց տվող անդամի ով կամ ինչ լինելը արտահայտող լրացումը կոչվում է բացահայտիչ [2, էջ 100]:

Բացահայտիչ ունեցող անդամը կոչվում է բացահայտյալ:

Տեսակները ներկայացնում ենք գծակարգով:



Բուն Մասնական Մասնավորող պարագայական

Բուն բացահայտիչը առանց կապի ձևավորվող այն բացահայտիչն է, որի լրացյալը ենթակա ,ստորոգելի, հատկացուցիչ կամ խնդիր է:

Բուն բացահայտիչն ու բացահայտյալը կապակցվում են համաձայնությամբ: Համաձայնությունը լինում է դեմքով, թվով, հոլովով, առումով:

Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով կամ դիմորոշ հոդերով:

Ձեզ՝ հայրենիքի պաշտպաններիդ, մեծարում է ողջ ժողովուրդը:

Մենք՝ մարզիկներս, բարձր պիտի պահենք մեր երկրի պատիվը:

Երբեմն բացահայտիչն ու բացահայտյալը կարող են չհամաձայնել:

Վարդանանց պատերազմին ոտքի էր ելել ողջ ժողովուրդը՝ իշխան ու գեղջուկ,այր ու կին,ծեր ու մանուկ:

Բացահայտիչը ունի կայուն շարադասություն. բացահայտյալի նկատմամբ հետադաս է: Եթե փոխվի շարադասությունը,կփոխվեն բացահայտչի ու բացահայտյալի պաշտոնները:

Բուն բացահայտիչը իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ և այդ պատճառով էլ ինքը դիտվի բացահայտյալ:

Հայոց դիցուհին՝ Աստղիկը՝ Վահագնի հարսնացուն,պաշտվել է որպես սիրո և գեղեցկության աստվածուհի:

Կետադրությունը

Բացահայտիչն ունի կայուն կետադրություն.այն բացահայտյալից տրոհվում է բութով, իսկ մյուս անդամներից՝ ստորակետով:

Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում հետևյալ դեպքերում.

1. Եթե բացահայտիչը դրված է **սեռական հոլովով**.

Հինավուրց տաճարի՝ Զվարթնոցի քանդակները այսօր էլ ապշեցնում են իրենց նրբագեղությամբ:

2. Եթե բացահայտչին հաջորդում է **կապ**.

Անիի՝ հայոց երբեմնի մայրաքաղաքի մասին հիացմունքով են խոսել նաև այլազգիները:

3. Եթե բացահայտչից հետո դրվում է **օժանդակ բայը** կամ **հանգույցը**.

Արգիշտին՝ Մենուայի որդին է հիմնել Էրեբունի ամրոցը:

4. Եթե բացահայտչից հետո դրվում է **էլ** հավելական շաղկապը:

Իմ ծննդավայրը՝ Գյումրին էլ տուժեց աղետալի երկրաշարժից:

Աշակերտները հաճախ բացահայտիչը շփոթում են բազմակի անդամների հետ:

Բացահայտիչ

Դահլիճում տարածվեց դյութիչ մեղեդին՝ սրնգահարի՝ սրտեր հուզող նվագը:

Բազմակի անդամներ

Դահլիճում տարածվեց դյութիչ մեղեդի,սրտեր հուզող մեղեդի:

«Հաստ» և **«Բարակ»** հարցերի օգնությամբ կարելի է ամրապնդել աշակերտների գիտելիքները:Հարցերն իրար ուղղում են աշակերտները:

«Հաստ» և «Բարակ» հարցերի աղյուսակը նախ միտված է գիտելիքների ստուգմանը,ապա՝ համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: [9, էջ 26]

«Հաստ» հարցեր	«Բարակ» հարցեր

«Հաստ» հարցերի օրինակներ՝

. Թվել բուն բացահայտչի երեք առանձնահատկություն:

. Ո՞ր դեպքերում բացահայտիչը ստորակետով չի տրոհվում:

«Բարակ» հարցերի օրինակներ՝

. Ո՞ր լրացումն է կոչվում բուն բացահայտիչ:

. Ի՞նչ շարադասություն ունի բացահայտիչը:

Մասնական բացահայտիչ

Մասնական բացահայտիչը,ի տարբերություն բուն բացահայտչի, բացահայտում է բացահայտյալի միայն մի կողմը և ձևավորվում է **որպես ,իբրև** կապերով:

Մասնական բացահայտիչն ունի ազատ շարադասություն.կարող է լինել և՛ նախադաս , և՛ հետադաս: Որոշիչ հոդ չի ստանում,հոլովով ու թվով համաձայնում է բացահայտյալին:

Իբրև սրբազան մասունքներ՝ մագաղաթյա մատյանները պահվում են Մատենադարանում:

Խաչքարերը՝**որպես հայոց դարավոր մշակույթի կենդանի վկաներ**,սփռված են ողջ Հայաստանում:

Մասնական բացահայտիչը չպիտի շփոթել ձևի պարագայի հետ:

Ձևի պարագան լրացնում է բային,իսկ բացահայտիչը՝ գոյականական անդամին:

Աղջիկը **նազում էր** իբրև մի քնքուշ եղնիկ: (քնքուշ եղնիկի պես)

Նա **մաքառել է** որպես աննկուն մարտիկ: (աննկուն մարտիկի պես)

Մասնավորող պարագայական բացահայտիչ

Բացահայտչի այս տեսակը անվանում են նաև կոնկրետացնող,քանի որ կոնկրետացնում է տեղ,ժամանակ ցույց տվող բացահայտյալին՝ պարագաներին:Այն ևս բացահայտյալից տրոհվում է բութով,իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով:

Ժամանակի պարագայական բացահայտիչ՝

Ամեն օր՝ **առավոտից մինչ երեկո**, այգեստաններում եռում էր աշխատանքը:

Տեղի պարագայական բացահայտիչ՝

Լեռան լանջին՝ **այրերի մեջ**, գիշեր-ցերեկ անդուլ ճգնել է հայոց սուրբը:

Պարագայական բացահայտիչը ևս կարող է լինել բազմակի: Այն չպետք է շփոթել կրկնակի պարագայական բացահայտչի հետ:

Փողոցում՝ էլեկտրասյուներին, մերկացած ծառերին, անհանգիստ ճռվողում էին թռչնակները: (բազմակի)

Հեռվում՝ ամրոցի առջև՝ գետի մյուս ափին ,երևում էին քաղաքի ավերակները: (կրկնակի)

Գիտելիքների ամրապնդման նպատակով կարելի է կազմակերպել **Կենտրոններով աշխատանք**՝ ստեղծելով բացահայտողների, հետազոտողների, ստեղծագործողների, գրավոր աշխատանքի կենտրոններ:

Բացահայտողների կենտրոնի անդամները տրված տեքստում գտնում են որոշիչները,հատկացուցիչները,բացահայտիչները և առանձնացնում եռասյուն աղյուսակում։

Հետազոտողների կենտրոնի անդամները բացատրում են լրացումների առանձնահատկությունները։

Ստեղծագործողների կենտրոնի անդամները կա՛մ պաստառի,կա՛մ քարտեզագրման միջոցով ներկայացնում են գոյականական անդամի լրացումները։

Գրավոր աշխատանքի կենտրոնի անդամները փորձում են հիմնավորել լրացումների կետադրությունը,կատարում են լեզվական կամ բառային աշխատանք։

Յուրաքանչյուր կենտրոնում աշխատանքի համար տրվում է որոշակի ժամանակ։

Արդյունավետ է նաև **Գիտելիքի դոմինո** մեթոդի կիրառումը։

Սովորողներին տրված քարտերին գրված հարցերը վերաբերում են գոյականական անդամի լրացումների արտահայտությանը,շարադասությանը,կետադրությանը,

կիրառությանը։Սովորողը կարդում է հարցը, նրան պատասխանող աշակերտը առաջադրում է իր հարցը և այդպես շարունակ։ Միմյանց հարցեր առաջադրելով և պատասխանելով կրկնվում է ողջ թեման։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոյականական անդամի լրացումները բավականին դժվարընկալելի են աշակերտների համար,քանի որ շփոթության տեղիք տվող նմանությունները բավականին շատ են: Ուստի ուսուցիչը ընտրելու է նպատակահարմար մեթոդներ ու հնարներ ուսուցումը ավելի մատչելի և ըմբռնելի դարձնելու համար:Այդ դեպքում լուծված կլինեն այն խնդիրները,որոնք դրվել են ուսուցման հիմքում,և ուսուցիչը կհասնի ցանկալի վերջնարդյունքների: Այսինքն՝

1. Աշակերտը ոչ միայն կիմանա ,որ որոշիչը ածականով գոյականով,դերբայով,դերանունով,թվականով,մակբայով,բառակապացությամբ,դերբայական դարձվածով արտահայտված լրացում է և ցույց է տալիս գոյականական անդամի որակական ,քանակական հատկանիշներ,այլև դրանք կկարողանա ուղիղ ու շրջուն շարադասությամբ գործածել խոսքում,կհարստացնի բառապաշարը:

2. Աշակերտը կիմանա,որ հատկացուցիչը սեռական հոլովով դրվող այն լրացումն է,որ առարկան որոշում է ստացական, ծագման,սերման,վերաբերության հարաբերությամբ,կկարողանա այն տարբերել կողմնակի ենթակայից ու ճիշտ կգործածի խոսքում:

3. Աշակերտը կիմանա բացահայտչի տեսակների մասին,կըմբռնի,որ այս լրացումը արտահայտում է մասի և ամբողջի,մասնավորի և ընդհանուրի, առարկայի ու անվանման և այլ հարաբերություններ,ունի ինքնուրույն տրոհում,արտաբերման յուրահատկություն,կկարողանա խոսքում ճիշտ կիրառել այն:

4. Սովորողը կկարողանա ազատ հաղորդակցվել,սեփական կարծիք հայտնել,կխուսափի լեզվական տարաբնույթ սխալներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էդվարդ Աղայան,Արդի հայերենի բացատրական բառարան,«Հայաստան»հրատարակչություն,Երևան,1976,1642 էջ։
2. Բարսեղյան Հովհաննես,Մեյթիխանյան Փառանձեմ,Հայոց լեզու,Երևան,2017,159 էջ։
3. Եզեկյան,Ոճագիտության ուղեցույց,Երևան,2007,118էջ։
4. Կապուտիկյան Սիլվա,Բանաստեղծություններ,հատոր1,«Սովետական գրող» հրատարակչություն,Երևան,1984,547էջ։
5. Չարենց Եղիշե,Պոեմներ,Բանաստեղծություններ,Երևանի համալսարանի հրատարակչություն,Երևան,1984,602էջ։
6. Սահյան Համո, Բանաստեղծություններ, հատոր1, «Սովետական գրող»հրատարակչություն,Երևան,1984,392էջ։
7. Սահյան Համո, Բանաստեղծություններ,հատոր2,«Սովետական գրող»,հրատարակչություն,Երևան, 1984, 440էջ։
8. Տերյան Վահան, Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, 570էջ։
9. Ուսուցման ժամանակակից մեթոդներ,հնարներ,վարժություններ,Կրթության ազգային ինստիտուտ,քաղաք Վանաձոր,2008,101 էջ։